ԱՆԴՐԱՆԻԿ ՅՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ (1920-1970 թվականներ)

Եգիպտոսի նորագույն շրջանի պատմության մեջ ուշագրավ տեղ է զբաղեցնում ազգային փոքրամասնությունների (այսուհետև՝ փոքրամասնություններ) ուսումնասիրությունը: Կազմելով բնակչության ոչ ավել քան տաս տոկոսը, երկրի փոքրամասնությունները XIX դ. կեսերից մինչև XX դ. 40-ական թթ.՝ շուրջ մեկ հարյուրամյակ, բավական նշանակալի դեր են խաղացել Եգիպտոսի քաղաքական, հասարակական և տնտեսական կյանքում: Նրանց ներկայացուցիչները գրավել են բարձր պետական պաշտոններ, էական ազդեցություն են ունեցել հասարակական-քաղաքական մտքի ձևավորման վրա, հարստացրել եգիպտական ազգային մշակույթը: Ստորև ներկայացվելու է խնդրո առարկա ժամանակաշրջանում, Եգիպտոսի փոքրամասնությունների մասնակցությունը երկրի տնտեսական-կյանքում, այս ասպարեզում նրանց ունեցած նշանակալի ազդեցությունը և քննարկվելու են դրա նվազման, ապա վերացման պատճառները:

Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիի (1805-1849) և նրա հետնորդների, հատկապես խեդիվ Իսմայիլ փաշայի (1863-1879) օրոք, Եգիպտոսի արդիականացմանն ու եվրոպականացմանն ուղղված խոշոր բարենորոգչական շարժման տարիներին, մեծ թվով օտարերկրացիներ հաստատվեցին երկրում: Անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող մասնագետների բացակայության պայմաններում, իրենց առջև դրված նպատակներն իրագործելու համար, Եգիպտոսի տիրակալները մեծ տեղ էին հատկացնում օտարերկրացիներին ու Օսմանյան կայսրության տարբեր ծայրերից ժամանող փոքրամասնություն-

ներին և խրախուսում նրանց ներգրավումը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում: Նորեկներին տրամադրվում էին քաղաքների լավագույն թաղամասերը, դրանք ապահովվում խմելու ջրով և էլեկտրականությամբ, կառուցապատվում էին ճանապարհները, երաշխավորվում էր անվտանգությունը[1]:

Հավելյալ արտոնություններ օտարերկրացիները վայելում էին այսպես կոչված կապիտուլյացիաների համակարգի հովանու ներքո: Անվանումը գալիս է լատիներեն *Capitula* բառից և նշանակում է եվրոպական տերությունների և Օսմանյան կայսրության միջև ստորագրված պայմանագրերի այն պայմանները, որոնց հիման վրա այդ երկրների քաղաքացիները, կայսրությունում բնակվելու ընթացքում, արտոնություններ, առևտրի, անձնական անվտանգության և ունեցվածքի ապահովության երաշխիքներ էին ստանում[2]: Քանի որ տեսականորեն Եգիպտոսը մինչև 1914 թ. համարվում էր Օսմանյան կայսրության մաս, դրա օրենքները տարածվում էին նաև այստեղ, իսկ հետագայում շատ ավելի ուշ վերացվեցին, քան կայսրությունից անկախացած այլ երկրներում: Պայմանագրի համաձայն կապիտուլյացիայից օգտվողները գրեթե չէին ենթարկվում Եգիպտոսի օրենսդրությանը, նրանց վրա շարունակվում էին տարածվել իրենց երկրների օրենքները, որոնց կատարմանը հետևում էին համապատասխան հյուպատոսները, ինչպես նաև ազատվում էին եգիպտական շատ հարկերի ու տուրքերի վճարումներից[3]: Եգիպտոսում օրենսդրական որոշ անձեռնմխելիություն՝ անձնական կեցության հարցերի ներքին իրավասություն, ունեին նաև թուրքահպատակ այն փոքրամասնությունները, որոնք պետության կողմից ճանաչվել էին *միլլի*, ինչպես օրինակ հույները, հայերն ու հրեաները[4]: Այս բաժանումը ևս Եգիպտոսին ժառանգություն էր մնացել օսմանյան տիրապետության տարիներից: Այս ամենի բերումով օտարերկրացիների թվաքանակը Եգիպտոսում կտրուկ աճեց՝ 1836 թ. 3.000-ի փոխարեն 1878 թ. հասնում էր

---

[1] Marius Deeb, The Socioeconomic role of the local foreign minorities in modern Egypt, 1805-1961. International journal of Middle East studies, vol. 9 (1978), number 1, p. 15.

[2] Gurdun Kramer, The Jews in modern Egypt 1914-1952, Washington, 1989, p 30.

[3] Ibid.

[4] Albert Hourani, Minorities in the Arab World, London, 1947, p. 41.

68.000-ի, իսկ 1907 թ. արդեն կազմում էր 221.000 մարդ[5]: Հետագա շուրջ երեք տասնամյակների ընթացքում այս թվաքանակը գրեթե անփոփոխ մնաց:

Խոսելով արդի ժամանակաշրջանի եգիպտոսի փոքրամասնությունների մասին, թերևս կարելի է դրանց պայմանականորեն բաժանել երկու խոշոր խմբի՝ ղպտիները, որոնք երկրի բնիկներն են ու թվաքանակով միշտ էլ շատ ավելի գերազանցել են մյուս բոլոր համայնքներին միասին վերցրած, և հիմնականում XIX դ. սկզբից սկսած այստեղ հաստատված այլ համայնքներին՝ հայերին, հույներին, հրեաներին և սիրիացի քրիստոնյաներին: Պետք է նշել, որ այս երկրորդ խմբին պատկանող փոքրամասնությունների համայնքների ներկայացուցիչների մեծ մասը ընդունել էր օտարերկրյա հպատակություն և օգտվում էր կապիտուլյացիաների ընձեռած հնարավորություններից: Այսպես, օրինակ, 1937 թ. մարդահամարի տվյալներով հունական համայնքի շուրջ 76 տոկոսը օտարահպատակ էր[6]: Փոքրամասնությունների այս հատվածին պատկանող համայնքները մշակութային, լեզվական, կենցաղային առումներով բավական եվրոպականացած էին, ունեին առանձին համայնքային, կրոնական ու կրթական հաստատություններ և եգիպտոսի հասարակության մեջ իրենցից յուրահատուկ կղզյակներ էին ներկայացնում: Ի տարբերություն նրանց, ղպտիների գերակշիռ մասը եգիպտահպատակ էր և բավականաչափ ինտեգրված էր բնակչության մեծամասնության մեջ: Ինչպես նշել է եգիպտոսում Մեծ Բրիտանիայի հյուպատոս, երկրի փաստական կառավարիչ լորդ Կրոմերը (1882-1907). «Միակ տարբերությունը ղպտիների և մուսուլմանների միջև այն է, որ առաջինը քրիստոնեական եկեղեցին պաշտող եգիպտացի է, իսկ երկրորդը եգիպտացի է, որը պաշտում է Մուհամմեդի մզկիթը»[7]: Թերևս այս դիտարկումը չափազանցված է, ղպտիներն ունեին համայնքային ու կրոնական բարձր գիտակցություն, սակայն իրենց վերոնշյալ հատկանիշներով, որպես համայնք, խիստ տարբերվում էին այլ փոքրամաս-

---

[5] Charles Issawi, Egypt in revolution: An econiomic analysis, London, 1963, p. 29.

[6] Thomas Phillip, Copts and other minorities in the development of the Egyptian nation-state. Egypt from monarchy to republic: A reassessment of revolution and change, edt. Shimon Shamir, San Francisco, 1995, p. 135:

[7] William Soliman Kelida, Christian-Muslim relations in Egypt, The Vatican, Islam and the Middle East, New York, 1987, գրքից, էջ 243:

նություններից: Եգիպտոսի սիրիական համայնքի ներկայացուցիչները, թեև նույնպես մեծամասամբ ընդունել էին եգիպտական քաղաքացիություն, սակայն իրենց կենցաղով, արևմտյան արժեքներին հետևելու հանգամանքով և կրթական ու տնտեսական հաջողություններով տարբերվում էին դպտիներից ու բնակչության մեծամասնությունից և դասվում էին մյուս փոքրամասնությունների շարքը[8]:

Տնտեսական և օրենսդրական արտոնություններ, ինչպես նաև եգիպտական, ապա 1882 թ. երկրի գաղութացումից հետո, բրիտանական իշխանությունների հովանավորությունը վայելելով՝ փոքրամասնություններն, ընդհանուր առմամբ, բարվոք վիճակ ու կեցություն էին ապահովել Եգիպտոսում: Նրանք զգալի հաջողությունների էին հասել հատկապես տնտեսության բնագավառում, որի շատ ճյուղերում փոքրամասնությունները և երկրում բնակվող օտարերկրացիները մենաշնորհ էին հաստատել:

Պետք է նշել, որ Մուհամմեդ Ալիի կողմից Եգիպտոսն ինդուստրիալիզացնելու ձախողված փորձից հետո այն դարձավ առավելաբար գյուղատնտեսական հումք արտահանող երկիր: XIX դ. երկրորդ կեսից մինչև XX դ. կեսերը այս ոլորտում գերակշռում էր բամբակի աճեցումը, մշակումն ու արտահանումը: Միջազգային շուկայում եգիպտական բամբակը լայն պահանջարկ էր վայելում և գրավում էր շատ ներդրողների: Ինչ վերաբերվում է արդյունաբերությանը, ապա այն զգալիորեն զիջում էր գյուղատնտեսությանը: Թեև ներդրումներն այս ասպարեզում խոստանում էին մեծ եկամուտներ, սակայն եգիպտական գործարարները խուսափում էին մտնել այս ճյուղի մեջ[9]: Այս երևույթը մասամբ բացատրվում է այն հանգամանքով, որ բրիտանական իշխանությունները արգելակում էին արդյունաբերության զարգացումը, քանի որ ցանկանում էին Եգիպտոսը նաև տնտեսապես կախված պահել իրենցից, իսկ մյուս կողմից դա պայմանավորված էր տնտեսության այս ոլորտում ներդրումների ռիսկի մեծ չափաբաժնով[10]:

---

[8] Albert Hourani, p. 48.

[9] Robert Mabro, Samir Redwan, The industralization of Egypt 1939-1973: Policy and perfomance, Oxford, 1973, p. 23.

[10] ibid.

Փոքրամասնությունները, ինչպես տեսանք վայելում էին թե՛ արտոնություններ, թե՛ հովանավորություն, նրանք ամուր կապեր էին հաստատել եվրոպական շուկաների և ֆինանսական աղբյուրների հետ, ինչը նրանց առավել շահեկան իրավիճակի մեջ էր դնում իրենց եգիպտացի գործընկերների նկատմամբ: Այս է պատճառը, որ նրանք, օտարերկրյա գործարարների հետ միասին, վերահսկում էին երկրի գրեթե ողջ արդյունաբերական ոլորտը[11]: Նույն իրավիճակն էր նաև տնտեսության այլ ճյուղերում: Հասարակության այս հատվածն էր գերակշռում եգիպտոսի ֆինանսական ու առևտրական բնագավառներում[12]: Եգիպտական թերթերից մեկը, վկայակոչելով օտարերկրացիների և փոքրամասնությունների տնտեսական հզորությունը, երկրի արտգործնախարարությանը կոչ էր անում դեսպանություն բացել Կահիրեի առևտրական կենտրոնում, «քանի որ այնտեղ հարաբերությունները վարվում են օտար լեզվով և գերակշռում են օտարալեզու ցուցանակները»[13]:

Փոքրամասնություններն աշխույժ գործունեություն էին ծավալել գրեթե բոլոր եկամտաբեր ճյուղերում: Այսպես, օրինակ, եգիպտոսի հունական համայնքը բավական ակտիվ էր բամբակի մշակման և արտահանման շուկայում: 1931-1932 թթ. բամբակի մշակման 141 ձեռնարկություններից 73-ը պատկանում էր եգիպտացիներին, 37-ը՝ հույներին, 31-ը՝ այլ օտարահպատակների[14]: Հույներին պատկանող ձեռնարկությունները կազմում էին ոլորտի արտադրական հզորության 36.8 տոկոսը[15]: Եգիպտոսի փոքրամասնությունների տնօրինության տակ գտնվող արդյունաբերական ձեռնարկություններից առավել լայն ճանաչում էին գտել հրեա գործարար Էլի Մոսերիի ցեմենտի գործարանը, որն իր տեսակի մեջ եզակի էր երկրում[16]: «Եգիպտական շաքարի ձեռնարկությունը» ղեկավարվում էր տնօրենների խորհրդի կողմից, որի անդամների գերակշիռ մեծամասնությամբ հունական և հրեական

---

[11] Ibid.

[12] Charles Issawi, Egypt in revolution…, p. 30.

[13] رفعت السعيد ، تأملات في الناصرية ، دمشق، 1979، ص80.

[14] Alexsander Kitroeff, The Greeks in Egypt 1919-1937: Ethnicity and class, London, 1989, p. 77.

[15] Ibid.

[16] Ghadu Hashem Telhami. Palestine and Egyptian national identity, New York, 1992, p. 13.

համայնքների ներկայացուցիչներ էին[17]: Հույն Զաչերի եղբայրների մետաղաձուլական կոմբինատը 1920-1930-ական թթ. անփոխարինելի ծառայություն էր մատուցում անգլիական զորքերի սպառազինությունների պահեստամասերի տրամադրման գործում[18]:

Մետաղագործական խոշոր ձեռնարկություններ էին տնօրինում հայազգի Արմենակ և Լևոն Կոկանյանները[19]: Եգիպտոս երկաթեղենի ներմուծման և առևտրի մենաշնորհը երկար ժամանակ գտնվում էր հայ գործարարների ձեռքում[20]:

Հունական կապիտալը տնօրինում էր մեծ թվով զովացուցիչ ու ալկոհոլային խմիչքների, ինչպես նաև սննդի ու ծխախոտի արտադրության գործարաններ: Ծխախոտագործության ասպարեզում նրանք երկար ժամանակ մենաշնորհ էին կիսում հայ գործարարների հետ, որոնց հիմնած Մաթոսյան, Մելքոնյան, Կամսարական անունները կրող գործարանները տնօրինում էին երկրի ներքին շուկան, մինչ հույներն ապահովում էին արտահանումը[21]: Հայկական ծխախոտագործական ձեռնարկություններում աշխատում էր այս ոլորտում ընդգրկված 14-15.000 բանվորներից շուրջ 10.000-ը[22]:

Քաղաքային առևտրի բնագավառում մեծ հաջողությունների էին հասել հրեական Սիկուրել ընտանիքին պատկանող հագուստի և կտորեղենի խանութ-սրահները[23]: Սիրիական Սինդաուի ընտանիքը եգիպտական քաղաքներում տնօրինում էր լայն սպառման ապրանքների խանութների ցանցի[24]:

Ժամանակաշրջանի շատ հայտի բանկեր ևս կրում էին փոքրամասնությունների ներկայացուցիչների անուններ՝ Քաթթաուի, դե Մենասկե, Սուարես,

---

17 Joel Beinin, The Jewish business elite in twentieth-century Egypt: Pillars of the national economy or compradors? Bulletin of the royal institute for inter-faith studies (Amman, Jordan), vol. 1, number 2, (Autumn 1999), p. 125.

18 Alexsander Kitroeff, p. 117.

19 Արշակ Ալպօյաճեան, Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը (սկիզբեն մինչեւ մեր օրերը), Գահիրե, 1960, էջ 193:

20 Նույն տեղում, էջ 190:

21 Alexander Kitroeff, p. 98:

22 Հովհ. Խ. Թոփուզյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, 1978, էջ 98:

23 علي ، يهود مصر منذ عصر الفراعنة حتى عام 2000 م ، القاهرة ، 2000، ص 279.

24 Thomas Philipp, The Syrians in Egypt 1725-1975, Stuttgart, 1985, p. 138.

Ձերվուդաչի և այլն[25]: Դպտի գործարարների կողմից հիմնված «Ասյութի», «Օթոբուս իխվան» և այլ ձեռնարկությունները վերահասկում էին Եգիպտոսի փոխադրամիջոցների 75 տոկոսը[26]:

Փոքրամասնությունների ներկայացուցիչները իրենց ձեռքերում էին կենտրոնացրել մեծ քաղաքների արհեստների խոշոր մասը: Մասնավորապես, ոսկեգործների մի ստվար հատված պատկանում էին հայ, հրեա և դպտի համայնքներին, կոշկագործների մեծ մասը հայեր և հույներ էին, հրեաները ճանաչված էին որպես լավ դերձակներ[27]:

Թեև գյուղատնտեսության բնագավառում ներգրավված էր օտարահպատակ փոքրամասնությունների միայն 1.2 տոկոսը, նրանք 1920-1940 ական թթ. տնօրինում էին մշակովի հողերի 6-ից 10 տոկոսը[28]: Փոքրամասնություններն առավել պատրաստակամությամբ ներդրումներ էին կատարում գյուղատնտեսական արտադրանքի վերամշակման ասպարեզում: Նրանց ֆինանսական միջոցները գերակշռում էին հայ մեծահարուստ Նուբար փաշայի[29] հիմնադրած «Բեհերա» ձեռնարկությունում[30]: Դրա բաժնետերերի շրջանում գերակշռում էին հայ համայնքի ներկայացուցիչները[31]: Հրեական կապիտալը վերահսկում էր նույն ուղղության «Ուադի կոմ օմբո» և «Շեյխ Ֆադդլ» ձեռնարկությունների արժեթղթերի մեծ մասը[32]: Վերջիններիս հողատարածքը միասին վերցրած գերազանցում էր 100.000 ֆեդդանը[33] /1 ֆեդդանը հավասար է 0.42 հա-ի/: Գյուղատնտեսության ասպարեզում բավական ամուր հիմքեր ուներ դպտիական համայնքը: Ուսումնասիրվող

---

25 Gurdun Kramer, p. 40.

26 سليمان شفيق ، الأقباط بين الحرمان الكنسي والوطني ، القاهرة ،1996، ص 79.

27 Issawi Charles, Egypt: An economic and social analise, London, 1947, p. 34.

28 Gabriel Baer, A history of landownership in modern Egypt. 1800-1950, Oxford, 1962, p. 120.

29 Նուբար փաշա Նուբարյան, Եգիպտոսի պետական-քաղաքական ականավոր գործիչ (1825-1899):

30 Gabriel Baer, p. 130.

31 Հովհ. Խ. Թոփուզյան, էջ 114:

32 عرفة عبده علي ، ص 273-274.

33 Նույն տեղում:

ժամանակաշրջանում նրա ներկայացուցիչները վճարում էին հողահարկի շուրջ 16 տոկոսը[34]:

Մեծ էր փոքրամասնությունների մասնակցությունը նաև Եգիպտոսի համատեղ ձեռնարկություններում: Ուժերի հարաբերակցությունն այստեղ արտացոլվում է 1951 թ. հրապարակված նմանատիպ հիմնարկությունների 1.406 տնօրենների ցուցակում, որտեղ նրանք ներկայացված են ըստ համայնքային պատկանելիության: Նրանցից 31 տոկոսը եգիպտացի մուսուլմաններ են, 4 տոկոսը՝ ղպտիներ, 18 տոկոսը՝ հրեաներ, 11 տոկոսը՝ սիրիացիներ, 8 տոկոսը՝ հայեր և հույներ և 30 տոկոսը՝ եվրոպացիներ[35]: Ինչպես տեսնում ենք, ներկայացված տվյալները խոսում են այն մասին, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Եգիպտոսի համատեղ ձեռնարկությունները տնօրինվում էին երեք հիմնական խմբերի կողմից, որոնցում քանակապես գերազանցում էին փոքրամասնությունները, ապա գալիս էին եգիպտացիներն ու եվրոպացիները: Պետք է նկատի ունենալ, որ եգիպտական կապիտալը համեմատաբար ուշ էր մուտք գործել այս ասպարեզ՝ Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Այս իրավիճակն էր տիրում նաև երկրի տնտեսության այլ ճյուղերում: Բնականաբար, ոչ բոլոր ոլորտներում էր ուժերի նույն հարաբերակցությունը, բայց պատկերը նմանատիպ էր՝ երկրի տնտեսությունը չէր վերահսկվում միայն եգիպտացիների կողմից, նրանք ստիպված էին իրենց ազգային հարստությունը կիսել եվրոպացիների և փոքրամասնությունների հետ: Վերջիններիս նրանցից շատերը եգիպտացի չէին համարում և դիտում էին նույն հարթության վրա, ինչ օտարերկրացիներին:

Մի քանի խոսք Եգիպտոսի տնտեսության մեջ օտարերկրյա կապիտալի ազդեցության մասին: Օգտվելով անգլիական գերիշխանությունից և նրանց խրախուսանքով երկրում, մեծ թվով եվրոպական ձեռնարկություններ էին գործում: Եվրոպացիները խոշոր դերակատարում ունեին երկրի տնտեսության մեջ: Նրանք վերահսկում էին այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են՝ բանկային համակարգը, քիմիական արդյունաբերությունը, ապահովագրական ընկերու-

---

[34] Barbara Lynn Carter, The Copts in Egyptian politics, London, 1986, p. 210.

[35] Б. Г. Сейранян, Египет в борьбе за независимость 1945-1952, Москва, 1970, стр. 25.

թյունները[36]: Նավթարդյունաբերության ասպարեզում մենաշնորհ ունեին անգլո-հոլանդական նավթային «Ռոյալ Դաթչ–Շելլ» և ամերիկյան «Ստանդարտ օյլ կոմպանի օֆ Նյու Ջերսի» ընկերությունները[37]: 1914-1934 թթ. ընթացքում հիմնված 56 արդյունաբերական ձեռնարկություններից 17-ը հիմնվել էին օտարերկրյա կապիտալով, 39-ը՝ տեղական-եգիպտական, սակայն դրանցում ներդրված օտարերկրյա ֆինանսական միջոցները կրկնակի գերազանցում էին եգիպտականը[38]:

Մի կողմից՝ տնտեսական բնագավառում եվրոպացիները, փոքրամասնություններն ու եգիպտացիները հաճախ աշխույժ համագործակցում էին, նրանց հետաքրքրությունների շրջանակը երբեմն լրացնում էր միմյանց: Մյուս կողմից, սակայն, երկրի տնտեսությունը ներկայացնող այս հոսանքների միջև բավական լուրջ մրցակցություն և հակամարտություն էր ընթանում: Շահերի բախման երևույթ էր առաջին հերթին կապիտուլյացիայի համակարգը, որը, ինչպես նշվել է, օտարերկրացիներին իրենց եգիպտացի գործընկերների նկատմամբ ավելի շահեկան վիճակի մեջ էր դնում: Մեկ այլ պատճառ էր հանդիսանում այն հանգամանքը, որ եգիպտական գործարարը կախված էր եվրոպական ֆինանսական հաստատություններից, քանի որ երկրի տնտեսության հիմնական ճյուղերը ֆինանսավորում էին օտարերկրացիների վերահսկողության տակ գտնվող բանկերը, իսկ վերջիններս էլ ժամանակ առ ժամանակ ցուցադրում էին իրենց ուժը՝ պահանջելով վերադարձնել իրենց տրամադրած վարկերը: Այս երևույթը տեղի ունեցավ, մասնավորապես, 1907 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամի ժամանակ[39]:

Այս երկու կետերը եգիպտացի գործարարներին թույլ չէին տալիս հավասարի իրավունքով մտնել երկրի տնտեսական դաշտ: Որոշ այլ հանգամանքներ ևս եգիպտացիներին խիստ անհանգստություն էին պատճառում: Նախ, փոքրամասնություններն ու օտարերկրացիներն իրենց ձեռնարկություններում գերադասում էին աշխատանքի ընդունել իրենց հայրենակիցներին

---

[36] Նույն տեղում, էջ 14:
[37] Ibid.
[38] Alexsander Kitroeff, p. 121.
[39] Marius Deeb, p. 18.

կամ այլ օտարերկրացիների[40]: Սա այն պարագայում, երբ Եգիպտոսում գնալով աճում էր գործազրկությունը, հատկապես, քաղաքային կրթված բնակչության շրջանում: 1937 թ. 7.500 միջնակարգ և 3.500 բարձրագույն կրթություն ունեցող բուն եգիպտացիներ գործազուրկ էին[41]: Երկրորդ, օտարերկրացիներն ու փոքրամասնությունները միշտ չէ, որ մտահոգ էին եգիպտական տնտեսության զարգացման և բազմաճյուղայնության մեջ: Նրանք հիմնականում ներդնում էին այն ավանդական ասպարեզներում, որոնք անմիջապես շահույթ էին խոստանում և մինիմալ վտանգ էին սպառնում ներդրումների համար, ինչպես օրինակ բամբակի, ծխախոտի, օճառի արտադրությունը[42]: Երրորդ, օտարերկրացիներն ու փոքրամասնություններն իրենց ձեռնարկություններից ստացվող եկամուտը ոչ ամբողջությամբ էին կրկին ներդնում Եգիպտոսում, դրա որոշ մասը դուրս էր հանվում երկրից[43]:

Ամփոփելով կարելի է ասել, որ ստեղծվել էր մի իրավիճակ, ուր երկրի տնտեսության հիմնական եկամտաբեր ճյուղերը, բարձր վարձատրվող աշխատանքները և ֆինանսական աղբյուրները գտնվում էին օտարերկրացիների ձեռքերում: Եգիպտական իշխանությունները, հասարակությունը, նոր զարգացող բուրժուազիան, հասկանալիորեն, չէին կարող հաշտվել նման իրավիճակի հետ: Եգիպտոսի ազգային-ազատագրական շարժման գործիչներն էլ հստակորեն գիտակցում էին, որ անգլիական գաղութատիրությունից լիակատար անկախություն ձեռքբերելու համար անհրաժեշտ է եգիպտականացնել տնտեսությունը: Այս պայմանների թելադրանքով է, որ Եգիպտոսում սկսեցին ուղիներ փնտրել օտարերկրացիների ու փոքրամասնությունների գերակա ազդեցությունը երկրում վերացնելու համար:

Այս ուղղությամբ կատարված առաջին խոշոր քայլերից մեկը 1920 թ. եգիպտական ազգային բուրժուազիայի մի խումբ ներկայացուցիչների կողմից «Միսր» բանկի հիմնումն էր, որի կանոնակարգի համաձայն դրա բաժնե-

---

[40] Նույն տեղում, էջ 21.

[41] Marsot Afaf Lutfi al-Sayyad, A Short history of modern Egypt, New York, 1985, p. 95.

[42] Robert Mabro, Samir Radwan, p. 26.

[43] E.R. Owen, Cotton and the Egyptian economy 1820-1914, Oxford, 1969, p. 323.

տոմսերը կարող էին ձեռքբերել միայն եգիպտացիները[44]: Նրա հիմնադիրները ջանում էին զարգացնել ազգային արդյունաբերությունը և այդ նպատակին հասնելու համար հիմնեցին շուրջ 20 ձեռնարկություններ[45]: Սակայն «Բանկ Միսրը» երկար ժամանակ չկարողացավ պահպանել իր զուտ ազգային նկարագիրը և ֆինանսական միջոցների սակավությունն ու անհավասար մրցակցությունը վերջ ի վերջո նրան մղեցին համագործակցել փոքրամասնությունների և օտար կապիտալի հետ[48]:

Եգիպտական իշխանությունները ևս աշխատում էին աջակցել ազգային բուրժուազիայի զարգացմանը և սահմանափակել օտարերկրյա տնտեսական ազդեցությունը երկրում: Այս ուղղությամբ վարվող քաղաքականության առաջին դրսևորումներից էր 1927 թ. մայիսի 10-ին ընդունված օրենքը, որի համաձայն համատեղ ձեռնարկությունների տնօրենների խորհրդի անդամներից առնվազն երկուսը պետք է եգիպտոսի քաղաքացի լինեն[47]: Այս օրենքին օտարերկրացիները պատասխանեցին խիստ վրդովմունքով՝ բրիտանական, ֆրանսիական, հունական և իտալական առևտրային պալատները միացյալ բողոքի նոտա հղեցին վարչապետին[48]: Հետագա գրեթե բոլոր կառավարություններն այս կամ այն չափով և փոփոխակի հաջողությամբ շարունակեցին այս քաղաքականությունը: Պետք է նշել, որ այս ժամանակաշրջանում դեռևս օտարերկրացիները բավական ամուր հիմքեր ունեին եգիպտոսում, քանի որ շարունակում էին վայելել Մեծ Բրիտանիայի հովանավորությունը, որի դիրքերը թեև թուլացել էին, բայց չէին վերացվել:

Եգիպտական իշխանությունները չէին կարող, շրջանցելով Մեծ Բրիտանիային, վերացնել օտարերկրացիների արտոնությունները, այդ պատճառով, բանակցությունների մեջ մտան նրանց հետ այս հարցի շուրջ: Իր հերթին, եգիպտոսի հետ հարաբերություններում Անգլիան այս կետը որպես խաղաթուղթ էր օգտագործում և փորձում էր օտարերկրացիների արտոնու-

---

[44] Б.Г. Сейранян, стр. 13.
[45] Ibid.
[46] Marius Deeb, p. 20.
[47] Նույն տեղում, էջ 19:
[48] Ibid.

թյունները վերացնելու փոխարեն որոշ զիջումներ կորզել երկրից: Հարցը քննարկման առարկա դարձավ լորդ Միլների գլխավորությամբ Անգլիայից ժամանած մի ներկայացուցչական պատվիրակության և եգիպտացիների միջև երկրի անկախության ձեռքբերման շուրջ վարվող բանակցությունների ընթացքում, ուր անգլիացիներն առաջարկեցին վերացնել կապիտուլիացիայի համակարգը, փոխարենը օտարերկրացիներին որոշ արտոնություններ տալ բրիտանական հովանավորության ներքո[49]: 1922 թ. Անգլիան Եգիպտոսը միակողմանիորեն անկախ հռչակեց, սակայն մի շարք վերապահումներ արեց: Հռչակագրի երրորդ կետի գ. ենթակետով այն իրեն իրավունք էր վերապահել «պաշտպանել օտարերկրացիների և փոքրամասնությունների իրավունքներն ու շահերը»[50]:

1922 թ. հռչակագիրը չէր կարող բավարարել եգիպտացիներին: Բրիտանիան պահպանում էր իր քաղաքական ու ռազմական գերակայությունը Եգիպտոսում: Եգիպտական կողմը ստիպված էր բանակցությունների նոր փուլի մեջ մտնել անգլիացիների հետ՝ լիակատար անկախություն, ձեռքբերելու համար: Կողմերը չէին կարողանում վերջնական որոշման հանգել մի շարք հարցերի շուրջ, որոնցից մեկն էլ օտարահպատակների իրավունքների հարցն էր, և քննարկումները երկար տարիներ տևեցին: Վերջապես, 1936 թ. օգոստոսի 26-ին Անգլիայի և Եգիպտոսի միջև կնքվեց բարեկամության մասին պայմանագիրը, որով Եգիպտոսը ավելի լայն անկախություն էր ստանում, թեև Մեծ Բրիտանիան շարունակում էր ամուր դիրքեր գրավել երկրում:

Պայմանագիրն անդրադարձավ նաև Եգիպտոսում օտարերկրացիների իրավական կարգավիճակին և արտոնություններին: Դրա 13-րդ կետով Անգլիան իր վրա պարտավորություն էր վերցնում համագործակցել կապիտուլյացիայի համակարգի վերացման գործում, իսկ պայմանագրի 12-րդ կետով օտարերկրյա շահերի պաշտպանությունը դրվում էր եգիպտական իշխանությունների վրա[51]:

---

[49] Ш. Н.Курдгелашвили, Революция 1952 года и крах британского господства в Египте, Москва, 1966, стр. 14.

[50] Նույն տեղում, էջ 16, հմմտ. Ն. Հ. Հովհաննիսյան, Հոկտեմբերը և ազգային-ազատագրական շարժման վերելքը Արաբական արևելքում, էջ 63-67:

[51] Նույն տեղում, էջ 25:

1937 թ. ապրիլի 12-ից մայիսի 8-ը Շվեյցարիայի Մոնտրե քաղաքում կապիտուլիացիայի համակարգը վերացնելու համար հատուկ խորհրդաժողով հրավիրվեց, որին ներկա էին նման իրավունքներ ունեցող բոլոր երկրները: Խորհրդաժողովի բոլոր մասնակիցները, բացառությամբ Ֆրանսիայի, համաձայն էին համակարգի վերացմանը, մնում էր միայն պարզել մանրամասները[52]: Ընդունված կոնվենցիայի համաձայն, կապիտուլյացիայի համակարգը Եգիպտոսում վերացվում էր, բայց սահմանվում էր 12-ամյա անցումային շրջան, որի ընթացքում օտարահպատակները շարունակում էին վայելել դրանով ընձեռնված հնարավորությունները[53]: Կապիտուլյացիայի վերացումը Եգիպտոսի համար մեծ քաղաքական և տնտեսական նշանակություն ուներ:

Այն ևս մեկ քայլ էր երկրի լիակատար անկախության ուղղությամբ, օտարերկրացիները զրկվում էին հարկային, իրավական և անձնական անձեռնմխելիությունից և եգիպտացիների հետ ստանում հավասար իրավունքներ:

Գործողությունների ավելի լայն դաշտ ստանալով՝ Եգիպտոսի ղեկավարությունը նոր թափով ձեռնամուխ եղավ տնտեսության ազգայնացմանը: 1947 թ. ընդունված համար 132 օրենքը սահմանում էր, որ Եգիպտոսում գրանցված բոլոր ձեռնարկությունների պաշտոնյաների 75, բանվորների 90 և Ֆինանսական միջոցների 51 տոկոսը պետք է եգիպտական լինեն: Այս օրենքը բավական մեծ վնաս հասցրեց փոքրամասնություններին, շատերը ստիպված էին իրենց տնօրինած տնտեսական հաստատությունների միանձնյա վերահսկողությունը կիսել ազգային կապիտալի ներկայացուցիչների հետ: Փոքրամասնությունների շատ ներկայացուցիչներ, կորցրեցին իրենց աշխատատեղերը[54]: Պետք է նշել, որ մինչև համար 132 օրենքի ընդունումը դեռևս գործում էր կապիտուլյացիայի վերացման 12-ամյա ժամկետը և փոքրամասնությունների ներկայացուցիչները չէին շտապում եգիպտական հպատակություն ընդունել:

1950թ. քաղաքացիության մասին նոր օրենք ընդունվեց, որով եգիպտահպատակ կարող էին համարվել 1914-1929 թթ. ընթացքում Եգիպտոսում մշտապես բնակվողները: Այս ժամանակաշրջանում իրենց կեցության ապացուցման

---

[52] Charles Issawi, Egypt: an economic and Social analysis..., p. 172.
[53] Ibid.
[54] Gurdun Kramer, p. 206.

իրավական կողմը դրվում էր դիմողների վրա[55]: Փոքրամասնությունների կողմից Եգիպտոսի քաղաքացիություն ընդունելու համար տրված դիմումների պատասխանները հաճախ բավական երկար ժամանակ ձգձգվում էին պաշտոնյաների կողմից, կամ՝ ուղղակի մերժվում[56]: Այսպիսով 1947 թ. ձեռնարկությունների և 1950թ. քաղաքացիության վերաբերյալ օրենքները նոր միջոցառումներ էին ուղղված փոքրամասնությունների տնտեսական հնարավորությունների սահմանափակմանը: Դրանք չանդրադարձան միայն առավելաբար եգիպտահպատակ ղպտիների և սիրիացիների վրա:

1920-1952թթ. ձեռնարկված միջոցառումների պատճառով, փոքրամասնությունների տնտեսական հզորությունը գնալով անկում էր ապրում, սակայն պետք է նշել, որ գործընթացը բավական դանդաղորեն էր ընթանում: Եթե 1931 թ. օտարահպատակները կազմում էին ձեռնարկությունների տնօրենների 90 տոկոսը, ապա 1937 թ. այն նվազեց մինչև 83.6, իսկ 1951 թ. արդեն կազմում էր 65 տոկոս[57]: Նվազման միտումը հիարկե ակնհայտ էր, սակայն փոքրամասնությունները շարունակում էին էական դեր խաղալ Եգիպտոսի տնտեսության մեջ: Ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, նրանց վիճակված չէր երկար ժամանակ շարունակել իրենց այս կարգավիճակը:

1952թ. շրջադարձային էր Եգիպտոսի նորագույն շրջանի պատմության համար: 1952թ. հուլիսի 23-ի հեղափոխության շնորհիվ իշխանության եկավ Եգիպտական զինված ուժերը ներկայացնող «Ազատ սպաներ» կազմակերպությունը: Հեղափոխությունից հետո երկրից վտարվեց թագավորը, արգելվեցին կուսակցությունները, պետական պաշտոնները սկսեց զբաղեցնել զինվորականությունը, 1954թ. երկրից դուրս եկան անգլիական զորքերը: Գալով իշխանության, Ազատ սպաները կանգնեցին պետության ծանր տնտեսական իրավիճակի բարելավման բարդ խնդրի լուծման առաջև: Եգիպտոսի բնակչությունը աղքատ և անուս էր: Եկամուտները բաշխվում էին խիստ անհավասարապես, օրինակ, 1955թ. ազգային եկամտի 55 տոկոսը տնօրինվում էր բնակչության

---

[55] Thomas Phillip, The Syrians in Egypt ..., p. 146.
[56] Ibid.
[57] Mraius Deeb, p 22.

միայն 20 տոկոսի կողմից[58]: 1952 թ. պետությունն ուներ 38 միլիոն եգիպտական ֆունտի դեֆիցիտ, մինչ կառավարության պահուստային ֆոնդը նույն ժամանակահատվածում 75 միլիոն ֆունտից իջավ 16.8-ի[59]: Ստեղծված պայմաններում կառավարությունը կարևորում էր երկրի մասնավոր սեկտորի հետ համագործակցությունը և սիրաշահում էր գործարարներին: Մասնավորապես, եգիպտոսի նախագահ գեներալ Մուհամմեդ Նագիբը 1952թ., ելույթ ունենալով երկրի առևտրի պալատում, հանգստացրեց գործարարներին և հայտարարեց, որ տնտեսության մեջ բեկումնային փոփոխություններ չեն սպասվում, իսկ 1953 թ. հեղափոխության առաջնորդ փոխգնդապետ Գամալ Աբդել Նասերը եգիպտոսի փոքրամասնություններին վստահեցրեց, որ նրանք երկրի անբաժանելի մասնիկն են կազմում ու լիիրավ քաղաքացիներ են[60]:

Իշխանություններն իրենց առաջնորդների հայտարարություններն իրականացնում էին գործնականորեն: Նախ, վերամշակվեց 1947թ. համար 132 օրենքը, այժմ օտարերկրյա կապիտալը կարող էր տնօրինել համատեղ ձեռնարկությունների 49 տոկոսը, այսինքն դրանք վերահսկելու հնարավորություն էր ստանում[61]: Ապա, չեղյալ հայտարարվեց 1948թ. ընդունված հանքարդյունաբերական ձեռնարկությունների մասին օրենքը, ըստ որի այդպիսի գործունեությամբ զբաղվող բոլոր հաստատությունները, ներառյալ նավթ արդյունահանող, պետք է վերածվեին եգիպտականի[62]: Խրախուսվում էին արտասահմանյան ներդրումները: 1953թ. համար 156 օրենքով ներդրողներին թույլատրվում էր արտասահման փոխանցել իրենց ֆինանսական միջոցների 10 տոկոսը, իսկ ներդրումից հինգ տարի անց նաև ամբողջ կապիտալը՝ տարեկան 25 տոկոս չափաբաժնով[63]: Եգիպտոս մուտքի արտոնագրերի և բնակության թույլատրման նոր միջոցառումները ևս էականորեն դյուրացնում էին

---

58 P. J. Vatikiotis, The history of Egypt, London, 1985, p. 202.

59 Robert Trigor, Foreign capital, foreign communities, and the Egyptian revolution of 1952. Egypt from monarchy to republic: A reassessment of revolution and change, edt. Shimon Shamir, San Francisco, 1995, գրքից, էջ 105:

60 Նույն տեղում, էջ 106:

61 В. А. Луцкевич, Египет в борьбе за экономическую независимость 1952-1971, Москва, 1976, стр. 19.

62 Նույն տեղում, էջ 20:

63 Robert Trigor, p. 109.

օտարահպատակների գործունեությունը: Այս ամենը միտված էր վերականգնելու երկրի քայքայված տնտեսությունը և ողջունվում էր փոքրամասնությունների կողմից: Մյուս կողմից իշխանությունների կատարած մի շարք ծեռնարկումներ առաջացնում էին նրանց խոր անհանգստությունն ու անվստահությունը եգիպտոսում իրենց հետագա գործունեության և կեցության հեռանկարների նկատմամբ:

1952թ. սեպտեմբերի 9-ին եգիպտական կառավարությունը ծեռնարկեց հողային բարեփոխումը, որով խոշոր հողատիրությունը սահմանափակվում էր 200 Ֆեդդանով[64], ազգայնացված տարածքները պետք է բաժանվեին անհող գյուղացիներին: Սա համարվում էր մեղմ միջոցառում, քանի որ տարածվում էր երկրի ոռոգվող հողատարածքների միայն 10 տոկոսի վրա և էականորեն չսասանեց հարուստ հողատերերի դիրքերը[65]: Հետագայում միջոցառումներն առավել խստացվեցին և 1960-ական թթ. խոշոր հողատիրությունը սահմանափակվեց 100, ապա՝ 50 Ֆեդդանով: Ռեֆորմը հավասարապես ազդում էր երկրի թե՛ մուսուլմանական, թե՛ քրիստոնեական բնակչության վրա: Փոքրամասնությունների դեմ ուղղված որևէ խտրական վերաբերմունքի մասին խոսելն, այս պարագայում անտեղի է, թեև դրանց հետևանքով արդեն 1960-1961թթ. օտարահպատակ փոքրամասնությունները գրեթե ամբողջությամբ դուրս մղվեցին գյուղատնտեսության բնագավառից[66]: Մեծ կորուստներ կրեցին ղպտի հողատերերը, որոնք մինչև հողային բարեփոխումը խոշոր կալվածքների էին տիրապետում հատկապես Վերին Եգիպտոսի շրջանում:

Հողային ռեֆորմների շրջանակներում փոքրամասնությունների համայնքային ունեցվածքին զգալի վնաս հասցվեց հոգևոր հաստատություններին պատկանող հողատարածքների (վակֆ) մեծ մասի ազգայնացմամբ: 1960թ. համար 264 օրենքի համաձայն յուրաքանչյուր նմանատիպ հողատարածք չպետք է գերազանցեր 200 ակր ոռոգվող և 200 ակր անմշակ չափաքանակը[67]: Չնայած փոքրամասնությունների կորուստների վերաբերյալ չկան արժանա-

---

[64] Նույն տեղում, էջ 112:

[65] Peter Mansfield, Nasser's Egypt, Baltimore-Maryland, 1965, p. 46.

[66] Gabriel S. Saab. The Egyptian agrarian reform 1952-1962, Oxford, 1967, p. 188.

[67] Barbara Lynn Carter, 1986, p. 42.

հավատ տվյալներ, պետք է ենթադրել, որ դրանք նշանակալի էին հատկապես ղպտիական և հայկական համայնքների համար: Ղպտիները միշտ խուսափում էին հրապարակել իրենց վանքապատկան հողերի իրական չափաքանակն ու եկամուտները: Միայն 1926 թ. տվյալներով Եգիպտոսում գործող ղպտիական յոթ վանական համալիրները միասին վերցրած ունեին 5-ից 9 հազար ակր հողատարածք[68]: Ինչ վերաբերվում է հայկական վակֆին, ապա այն կազմում էր շուրջ 2.000 ֆեդդան[69]: Եգիպտոսի պայմաններում այս հողատարածքները կարելի է դասել առանձնապես խոշոր հողատիրության շարքը: Դրանց ապահոված եկամուտներն ուղղվում էին ոչ միայն վանքերի, այլև համայնքային մի շարք հաստատությունների՝ դպրոցների, բարեգործական հիմնարկների ֆինանսավորմանը: Այսինքն, վակֆերի ազգայնացումն ուղղակիորեն հարվածում էր համայնքների բարեկեցությանը:

Եգիպտոսի տնտեսությունը վերականգնելու համար իշխանությունները ստիպված էին օտարերկրյա վարկեր և օգնություն խնդրել: Երբ արևմտյան պետությունները մերժեցին ֆինանսական աջակցություն տրամադրել, կառավարությունն ազգայնացրեց Սուեզի ջրանցքի ընկերությունը, որի արժեթղթերի գերակշիռ մասը պատկանում էր օտար տերություններին: Ջրանցքը եզակի տնտեսական նշանակություն ունեցող կառույց էր, և դրա բերած խոշոր եկամուտները Եգիպտոսի իշխանությունները նպատակադրվել էին ուղղել երկրի անհրաժեշտ ճյուղերի ֆինանսավորմանը: Սուեզը եվրոպական պետությունների համար նաև շատ մեծ տնտեսական ու ռազմավարական կարևորություն ուներ և դրա ամբողջական վերահսկողության անցումը եգիպտացիներին չէր կարող անարձագանք մնալ: 1956 թ. հոկտեմբերի 31-ին իսրայելյան, ապա անգլո-ֆրանսիական զինված ուժերը հարձակվեցին Եգիպտոսի վրա, գրավեցին Սինայի թերակղզին և հասան մինչև Սուեզի ջրանցք: Դրան հետևեց Եգիպտոսի կառավարության որոշումը՝ ազգայնացնել Եգիպտոսում գտնվող ողջ անգլո-ֆրանսիական կապիտալը, իսկ այդ երկրների քաղաքացիներից շատերը վտարվեցին: Պատժամիջոցներ կիրառվեցին նաև

---

[68] Ibid.

[69] Gabriel Baer, p. 179.

հրեական համայնքին պատկանող ունեցվածքի դեմ: 1956-1957 թթ. ընթացքում հրեաներին պատկանող շուրջ 500 ձեռնարկություններ բռնագրավվեցին, ևս 800-ը դրվեցին հսկողության ներքո և նրանց բանկային հաշիվները սառեցվեցին[70]: 1960 թ. Բելգիայի Կոնգո ներխուժելուց հետո, ազգայնացվեց նաև Եգիպտոսում գործող բելգիահպատակների ողջ ունեցվածքը:

Այս ծայրահեղ միջոցառումները, ինչպես տեսանք, կազմակերպվել էին ի պատասխան արտաքին ուժերի գործողությունների և թելադրված էին քաղաքական շարժառիթներով: Դրանք 1952 թ. հետո տեղի ունեցած առաջին խոշոր բռնագրավման ու ազգայնացման ալիքներն էին և ուղղված էին օտարերկրյա և տեղական փոքրամասնությունների կապիտալի դեմ: Եթե հեղափոխությունից հետո ընկած առաջին շրջանում՝ 1952-1956 թթ., ինչպես արդեն նշվել է, իշխանությունները փորձում էին համագործակցել ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա և փոքրամասնությունների ձեռնարկատերերի հետ, ապա 1956թ. հետո իրավիճակը փոխվեց: Երկրի ղեկավարությունը շրջադարձ կատարեց Եգիպտոսի տնտեսության ազգայնացման ուղղությամբ: Այս փոփոխությունը բացատրվում է Եգիպտոսի կառավարության կողմից տնտեսական կուրսի նկատմամբ նոր մոտեցումներ հանդես բերելու հանգամանքով: Ինչպես կտեսնենք ստորև, 1956թ. հետո այն արմատապես տարբերվելու է մինչ այդ նրա վարած քաղաքականությունից:

Նախ, 1956թ. նոյեմբերին քաղաքացիության մասին նոր օրենք հրապարակվեց: Այն սահմանում էր, որ եգիպտահպատակ կարող են համարվել միայն այն քաղաքացիները, որոնք երկրում անընդհատ բնակվել են 1900թ. մինչև օրենքի հրապարակման պահը և չեն գտնվել այլ երկրների իրավասության տակ[71]: Նոր օրենքը Եգիպտոսի փոքրամասնությունների համար խիստ դժվարացնում էր քաղաքացիություն ընդունելը, իսկ մինչ այդ արդեն ընդունածների իրավական կարգավիճակը դառնում էր հեղհեղուկ և հիմնականում

---

[70] Michael M. Laskier, Egyptian Jewry under Nasser's regime, 1956-1970. Middle Eastern studies, vol. 31, No 3, July 1995, p. 580.
[71] Նույն տեղում, էջ 582-583:

կախված էր մնում կոնկրետ գործի վերաբերյալ պաշտոնյաների վերաբերմունքից[72]:

1957 թ. ընթացքում մի շարք միջոցառումներ կատարվեցին տնտեսության եգիպտականացման ուղղությամբ: Հունվարին հրապարակված կառավարության օրենքների համաձայն, բանկային ու ապահովագրական գործառությամբ զբաղվողները, ինչպես նաև ձեռնարկությունների արտահանման, ներմուծման և առևտրական ներկայացուցիչները պետք է եգիպտահպատակ լինեին[73]: 1958 թ. ընդունված օրենքները սահմանում էին, որ ձեռնարկությունների տնօրենների 51 տոկոսը պետք է եգիպտոսի քաղաքացիներ լինեն, արաբերենը դառնում էր տնտեսական գործառությունների պաշտոնական լեզուն[74]:

Իշխանությունների կողմից վարվող եգիպտականացման քաղաքականությունը ուղղակի թե անուղղակի ելնում էր տեղական բուրժուազիայի շահերից: Հանձինս օտարահպատակների դիրքերի թուլացման, նրանք գործունեության նոր դաշտ էին շահում և հնարավորություն էին ստանում իրենց ձեռքերում կենտրոնացնել շուկայի այն ոլորտները, որտեղ մինչ այդ ընթացող մրցակցությունը հաճախ լինում էր փոքրամասնությունների և օտար երկրների քաղաքացիների օգտին: Եգիպտական բուրժուազիան իր երախտագիտությունն էր հայտնում երկրի նախագահ Գ. Ա. Նասերին[75]: Իր հերթին կառավարությունը բռնագրավված ձեռնարկությունների շնորհիվ ավելացնում և ուժեղացնում էր պետական սեկտորի ներգրավվածությունը տնտեսության մեջ: Ինչպես ցույց տվեց իրադարձությունների հետագա զարգացումը, հենց այս գիծն էր որդեգրվելու կառավարության կողմից: 1960-ական թթ. սկզբներին նրանք եկան այն եզրակացության, որ միայն ուժեղ պետական սեկտորն է ի վիճակի լուծել երկրի առջև ծառացած տնտեսական խնդիրները, քանի որ բուրժուազիան, ընդհանուր առմամբ, չէր հետևում կառավարության մշակած ծրագրերին և չէր աջակցում նրա միջոցառումներին[76]:

---

[72] Ibid.

[73] Charles Issawi, Egypt in revolution ..., p. 57.

[74] Ibid.

[75] И.П. Беляев, Е.М. Примаков, Египет: время президента Насера. Москва, 1975, стр. 128.

[76] Նույն տեղում, էջ 142:

Արդյունքում Եգիպտոսի ղեկավարությունը պետության օգտին մասնավոր սեփականության բռնագրավման գործողություններ ձեռնարկեց: 1960 թ. պետականացվեցին «Բանկ Միսրն» ու Եգիպտոսի «Ազգային բանկը»: Հետագա միջոցառումներն առավել խոշոր ու նպատակաուղղված էին: 1961-1963 թթ. ընթացքում պետականացվեցին շուրջ 1.300 ձեռնարկություններ, որոնք պատկանում էին Եգիպտոսի խոշոր ու միջին բուրժուազիային[77]: Նրանց ներկայացուցիչների հակազդեցությունից խուսափելու համար իշխանությունները 1961թ. հոկտեմբերին և 1962թ. փետրվարին բռնագրավեցին երկրի 600 մեծահարուստների, այդ թվում փոքրամասնությունների շատ ներկայացուցիչների, ունեցվածքները, 40 հոգի ձերբակալվեցին շատերն արտաքսվեցին երկրից[78]: 1961-1962 թթ. ընթացքում բռնագրաված անձնական ունեցվածքի 25 տոկոսը պատկանում էր երկրի մուսուլմանական բնակչությանը, 3-ը՝ դպտիներին, 18-ը՝ սիրիա-լիբանանցիներին, 50-ը՝ հրեաներին, 1-ը՝ հայերին, 3-ը՝ հույներին և 1-ը՝ եվրոպացիներին[79]: Ստեղծված պայմաններում փոքրամասնությունները մեծ քանակությամբ սկսեցին գաղթել երկրից: Այսպես, օրինակ, 1947թ. 75.000 հազար հաշվվող հրեական համայնքը 1970 թ. նվազեց մինչև մի քանի հարյուր մարդու[80]: Պատմության մեջ առաջին անգամ լինելով երկրից գաղթեցին դպտիները: Համայնքի շուրջ 150.000 անդամներ հաստատվեցին ԱՄՆ-ում, Կանադայում և Ավստրալիայում[81]: Անշուշտ, դա հետևանք էր նաև պարբերաբար կրկնվող արաբ-իսրայելյան պատերազմների:

Այսպիսով, Եգիպտոսի տնտեսությունը ազգայանացնելու եգիպտական կառավարությունների ու ազգային բուրժուազիայի 1920-ական թթ. վարվող շարունակական քաղաքականությունն իր լուծումը ստացավ միայն 1960-ական թթ. սկզբին: Այս ժամանակաշրջանում է, որ վերացավ փոքրամասնությունների կողմից երկրի տնտեսության մեջ ունեցած նշանակալի դերը:

---

[77] Նույն տեղում, էջ 143-144:

[78] Peter Mansfield, p. 138.

[79] Charles Issawi, Egypt in revolution ..., p. 62.

[80] Michael M. Laskier, p. 613.

[81] Karas Shawkey, The Copts since the Arab invasion: strangers in their own land, Jersey City, 1985, p. 89.

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ արդարացված չի լինի պնդել, թե դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Եգիպտոսի հատկապես հեղափոխական իշխանությունները, ի տարբերություն նախորդների, արդյունավետ պայքար էին մղում նրանց դեմ: Թեև 1952թ. հետո կառավարությունը տնտեսության ազգայնացման որոշակի քաղաքականություն վարել է, փոքրամասնությունների կարգավիճակի փոփոխման պատճառները պետք է փնտրել թերևս ոչ միայն և ոչ այնքան դրանում, որքան ժամանակաշրջանի Եգիպտոսի պատմության և զարգացումների առանցքում: Իհարկե, փոքրամասնությունների տնտեսական հզորությունը վերջնականապես քայքայվեց 1952 թ. հեղափոխությունից հետո, սակայն պետք է նկատի ունենալ, որ մինչ այդ կատարված միջոցառումներն արդեն իսկ խիստ սասանել էին դրանք: 1920-1952 թթ. ընթացքում փոքրամասնությունները զրկվել էին կապիտուլյացիայի համակարգի արտոնություններից, Մեծ Բրիտանիայի ամենակարող հովանավորությունից, ծանր հարվածներ էին ստացել օրենսդրական մի շարք փոփոխությունների, հատկապես 1947թ. ձեռնարկությունների և 1950թ. քաղաքացիության մասին օրենքների, պատճառով: Ինչպես տեսանք, 1952-1956 թթ. իշխանությունները վարում էին օտարերկրյա ներդրումների և մասնավոր սեկտորի խրախուսման քաղաքականություն: 1956 թ. հետո, Եգիպտոսում տեղի ունեցած քաղաքական և տնտեսական կուրսի փոփոխությունները չէին կարող իրենց անդրադարձը չունենալ համայնքների վրա: Նրանց յուրահատուկ կարգավիճակը, սակայն, պայմանավորեց փոքրամասնությունների տնտեսական կորուստները թե՛ օտար երկրների ֆինանսական միջոցների ու դրանց քաղաքացիների ունեցվածքի դեմ ձեռնարկված միջոցառումների, թե՛ զուտ եգիպտական բուրժուազիայի կապիտալի պետականացման ժամանակ: